

## **Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ՀՀ առևտրային բանկերի տեղակայվածության նկարագրողական վերլուծություն**

*2012 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով*

ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրապարակված<sup>1</sup> առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված են Հայաստանի 21 առևտրային բանկերը, որոնք թվով կազմում են ներկայացված կազմակերպությունների 2.1 տոկոսը: Նախ նշենք, որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի առևտրային բանկերի հիմնական գործառնությունները ազատված են ԱԱՀ-ից և ընդհանրապես, ելնելով գործունեության բնույթից առևտրային բանկերը նաև այլ տեսակի անուղղակի հարկեր քիչ են վճարում: Հաշվի առնելով նաև այդ հանգամանքը, այնուամենայնիվ, 1000 հարկատուների ցանկում առևտրային բանկերը, ՀՀ պետական բյուջե վճարված ընդհանուր հակերի գծով 21-րդ և 33-րդ տեղերում են, համապատասխանաբար ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈՒԼ և ԷՅ-ԷՅ-ԲԻ-ՍԻ բանկերը, ինչը, հաշվի առնելով ներկայացված նախապայմանները՝ բարձր ցուցանիշ է:

Ընդհանրական պատկերացում կազմելու նպատակով վերլուծենք ընդամենը հարկերի, շահութահարկի և անուղղակի (այդ թվում ԱԱՀ) հարկերի թվային շարքերը, 1000 կազմակերպությունների համար: Ընդամենը հարկերը բոլոր 1000 կազմակերպությունների գծով կազմել է 458.5 մլրդ. ՀՀ դրամ իսկ միայն բանկերի գծով՝ 25.7 մլրդ դրամ, կամ ընդհանուրի 5.6 տոկոսը: Այստեղ միանգամից նկատենք, որ բանկերը նույնիսկ ԱԱՀ չվճարելու պայմաններում միջին հաշվով ցանկում խոշոր հարկատուներ են. երբ թվով կազմում են 2.1 տոկոս, իսկ վճարված հարկերով 5.6 տոկոս: Ներքոհիշյալում ներկայացնենք ընդամենը հարկերի նկարագրողական վիճակագրությունը, առևտրային բանկերի և մնացած կազմակերպությունների համար, առանձնացված տեսքով: Առևտրային բանկերի ընդամենը վճարված հարկերի միջինը՝ 1.22 մլրդ. դրամ գերազանցում է մնացած կազմակերպությունների միջինին, որը կազմել է 544.1 մլն. դրամ:

Ուղղակի հարկերի ընդհանուրը՝ շահութահարկի և եկամտահարկի գծով բոլոր 1000 կազմակերպությունների գծով կազմել է 138.4 մլրդ. ՀՀ դրամ իսկ միայն բանկերի գծով՝ 23.6 մլրդ դրամ, կամ 17.05 տոկոսը: Այստեղ բանկերը էապես առաջնային դիրքերում են: Համեմատության համար նշենք, որ ուղղակի հարկերով, 1000 առաջին խոշոր հարկատուների ցանկում՝ 19 առևտրային բանկ, գտնվում են առաջին 100-ակի ցուցակում:

Ներքոհիշյալում ներկայացնենք շահութահարկի և եկամտահարկի նկարագրողական վիճակագրությունը, առևտրային բանկերի և մնացած կազմակերպությունների համար, առանձնացված տեսքով: Առևտրային բանկերի վճարված շահութահարկի և եկամտահարկի միջինը՝ 1.124 մլրդ. դրամ մի քանի անգամ գերազանցում է մնացած կազմակերպությունների միջինին, որը կազմել է 117.8 մլն. դրամ:

<sup>1</sup> ՀՀ ՊԵԿ ցանկեր - <http://www.taxservice.am/>

Հայաստանի բանկերի միություն

Գ/Գ	Համարը ամբողջ ցանկում	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	2012 ֆինանսական տարվա սկզբից հունվար-դեկտեմբեր ամիսներում հարկ վճարողի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)						
				ընդամենը	հարկային մարմինների կողմից հավաքագրված	մաքսային մարմինների կողմից հավաքագրված	որից			
							այդ թվում՝	նուղղակի հարկեր (այդ թվում՝ շահույթահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատագրված վճարներ (այդ թվում՝ մաքսային սահմանին վճարված)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	21	02520007	ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	3642066.9	3638713.3	3353.6	3527594.5	110377.1		4095.2
2	33	02514855	ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	2761754.9	2741813.7	19941.2	2411145.0	328186.8		22423.1
3	35	02502212	ԱՄԵՐԻԿԱԲԱՆԿ	2609349.2	2557469.8	51879.4	2448099.0	145187.2		16063.0
4	42	00400222	ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	2286146.6	2280829.6	5317.0	1959600.0	213853.0		112693.6
5	51	01500362	ՀԱՅԲԻՉԼԵՍԲԱՆԿ	1757053.6	1754463.9	2589.7	1596771.3	135249.5	46.5	24986.2
6	58	02566492	ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍԲԱՆԿ	1586309.5	1571620.3	14689.2	1512796.4	52554.7		20958.5
7	62	02559077	ՅՈՒՆԻԲԱՆԿ	1405655.2	1372562.2	33093.0	1290974.3	87496.7		27184.2
8	66	02500518	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	1336931.3	1331329.9	5601.4	1129582.3	46416.9		160932.2
9	77	02518512	ԻՆԵԿՈԲԱՆԿ	1235152.2	1228723.2	6429.0	1207571.2	14119.1		13461.9
10	89	02540791	ԱՌԵԿՍԻՄԲԱՆԿ ԳԱՉՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ	1072802.1	1072207.9	594.3	938146.3	105514.2		29141.6
11	92	02501718	ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ	1016043.1	1015963.9	79.2	1011022.8	1324.5		3695.9
12	106	00000291	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	875419.4	861812.3	13607.1	769470.7	97316.6	30.0	8602.2
13	114	02201405	ՀԱՅԵԿՈՆՈՍԲԱՆԿ	819671.0	780976.2	38694.8	742260.8	62738.1		14672.2
14	129	00001182	ՊՐՈՍԵԹԵՅ ԲԱՆԿ	752140.0	751720.0	420.0	685448.8	58310.8		8380.4
15	161	00005409	ԱՆԵԼԻԶ ԲԱՆԿ	585258.4	585240.9	17.5	519794.6	52327.9		13135.9
16	194	02587698	ՊՐՈԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ	486307.8	473743.0	12564.8	388133.2	80205.7		17968.8
17	198	02574955	ԱՐՄՍԿԻՍԲԱՆԿ	478677.6	476405.5	2272.1	460894.6	13422.1		4360.9
18	199	00000826	ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ	477509.9	475314.4	2195.5	466086.9	5634.3		5788.7
19	228	01505323	ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ	408574.8	406817.3	1757.5	371597.2	30442.9		6534.8
20	774	08602169	ԲՏԱ ԲԱՆԿ	107742.4	106000.8	1741.7	95345.0	5065.6		7331.9
21	886	01533411	ԱՐՑԱԽԲԱՆԿ ՓԲԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՅՈՒՂ	90985.9	89035.2	1950.8	86952.7	2433.1		1600.2
ԸՆԴԱՄԵՆՆԸ				25791556.8	25572769.3	218795.8	23619295.6	1648185.8	86.5	524022.4